ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

10 մարտի 2016 թվականի N 133 - Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՊԵՏԻ 2016 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 13-Ի N 5-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 5-րդ մասը՝

1. Հայաստանի Հանրապետության վարչապետի 2016 թվականի հունվարի 13-ի «Արտահանմանն աջակցելու նպատակով արտահանման աջակցման խորհուրդ ստեղծելու, արտահանման աջակցման խորհրդի աշխատակարգը, աջակցություն ստանալու նպատակով Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ տնտեսվարող սուբյեկտների կողմից հայտերի ներկայացման և գնահատման, հայտերի հավանության արժանացման և աջակցության տրամադրման ընթացակարգը, տեղական արտադրության ապրանքների արտահանման համար օժանդակություն ստանալու հայտի և արտահանման օժանդակություն ստանալու նպատակով ներկայացվող դիմումի ձևերը հաստատելու և 2016 թվականի ընթացքում արտահանման անմիջական աջակցության տրամադրման համար գերակա համարվող Հայաստանի Հանրապետության արտադրանքի տեսակների ցանկը հաստատելու մասին» N 5-Ա որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները՝

1) որոշման վերնագիրը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«Արտահանմանն աջակցելու նպատակով արտահանման աջակցման խորհուրդ ստեղծելու, արտահանման աջակցման խորհրդի անհատական կազմը հաստատելու և 2016 թվականի ընթացքում արտահանման անմիջական աջակցության տրամադրման համար գերակա համարվող Հայաստանի Հանրապետության արտադրանքի տեսակների ցանկը հաստատելու մասին».

2) ուժը կորցրած ճանաչել որոշման 2-րդ կետի 3-րդ, 4-րդ և 5-րդ ենթակետերը.

3) որոշման 2-րդ կետը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ 7-րդ ենթակետով.

«7) աջակցության տրամադրման գործիքը և տրամադրման ընթացակարգ-ուղեցույցը հաստատվում են արտահանման աջակցման խորհրդի որոշմամբ:».

4) ուժը կորցրած ճանաչել որոշման N 2 հավելվածի 3-րդ կետը.

5) որոշման N 2 հավելվածի 4-րդ կետի 1-5-րդ ենթակետերը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«1) քննարկման է ներկայացնում աջակցության մեխանիզմների և դրանց տրամադրման ընթացակարգերի վերաբերյալ առաջարկություններ՝ կախված տվյալ ժամանակահատվածում առկա մարտահրավերներից և հաստատում է դրանք.

2) լսում և ընդունում է հաշվետվություններ հաստատված գործիքների փաստացի կիրառման և ընթացքի վերաբերյալ.

3) անհրաժեշտության դեպքում առաջարկություններ է ներկայացնում Հայաստանի Հանրապետության վարչապետին՝ վերջինիս կողմից համապատասխան հանձնարարական-ներ տալու նպատակով:».

6) որոշման N 2 հավելվածի 14-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«14. Խորհրդի աշխատանքների կազմակերպչական ապահովումն իրականացնում է Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարությունը:»:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ Հ. ԱԲՐԱՀԱՄՅԱՆ

2016 թ. մարտի 10
Երևան

133v.voroshum